

# Աջակցվող բնակարանային ապահովում՝ զստ Հոգեկան առողջության ծառայությունների օրենքի (MHSA)

2014 թվականի մարտ, թիվ CM35.10 հրատարակություն

## 1. Ո՞րն է մշտական աջակցվող բնակարանային ապահովումը:

Մշտական աջակցվող բնակարանային ապահովումը մատչելի բնակարանային ապահովում է, որով կամավոր ծառայություններ են առաջարկվում ցածր եկամուտ և անկարողություններ ունեցող այն անձանց, ովքեր անօթևան են կամ որոնց սպառնում անօթևան դառնալու վտանգը: «Մշտական» նշանակում է, որ բնակարանում կացության ժամկետը անսահմանափակ է: Դուք կարող եք ապրել այնտեղ այնքան ժամանակ, որքան պահպանեք բնակարանի վարձակալության պայմանագրի պայմանները:

## 2. MHSA-ն ֆինանսավորում է բնակարանային ապահովումը:

Այո: 2006 թվականին MHSА Բնակարանային ապահովման ծրագիրը ստացել էր 400 մլն. դոլար՝ հոգեկան առողջության անկարողություններ ունեցող մարդկանց համար աջակցվող բնակարաններ կառուցելու կամ վերանորոգելու համար: Չնայած որ ծրագիրը աջակցվող բնակարանների համար ֆինանսական օգնության զգալի աղբյուր է, դրա միջոցները սահմանափակ են: Ծրագրի սկզբանակն նպատակն էր ապահովել մշտական աջակցվող 10,000 բնակարան: Այնուամենայնիվ 2013 թվականի ապրիլին Առողջապահական ծառայությունների նահանգային վարչությունը, (DHCS) զեկուցել է նպատակի մասին՝ 2,500 բնակարանների թվով, որոնցից 1,095-ը արդեն պատրաստվել են զբաղեցնելու համար: DHCS-ն նաև զեկուցել է, որ ընդհանուր թվով 117,496,607 դոլարի MHSА միջոցներ են բաշխվել մինչև 2013 թվականի մարտը:

### 3. Ո՞վ է պայմանունակ MHSА աջակցվող բնակարանային ապահովման համար:

MHSА աջակցվող բնակարանային ապահովման ծրագրի թիրախում են ցածր եկամուտ ունեցող և անօթևան մարդիկ կամ այն մարդիկ, ում սպառնում է անօթևան դառնալու վտանգը: Պայմանունակ լինելու համար դուք նաև պետք է լինեք հոգեկան առողջության լուրջ անկարողություն ունեցող չափահաս կամ պատանի, ով ունի լուրջ զգացական խանգարում՝ ինչպես որ սահմանված է նահանգի օրենքով:

### 4. Ո՞վ է որակավորվում որպես «անօթևան»:

Փողոցում ապրող կամ գիշերը կանոնավոր կերպով տանը անցկացնելու հնարավորությունից զրկված անձինք համարվում են անօթևան: «Անօթևան» լինելը նշանակում է ապաստանում, մոթելում կամ այլ ժամանակավոր կացարանում ապրելը առանց վարձակալողի իրավունքների:

### 5. Ու՞մ է սպառնում «անօթևան դառնալու վտանգը»:

Ահա ոչ սահմանափակ ցանկը այն անձանց, ում սպառնում է անօթևան դառնալու վտանգը.

- a. անցումային տարիքի պատանիները, որոնք դուրս են գալիս երեխաների ապահովման կամ անչափահասների գործերով արդարադատության համակարգերից դուրս եկող երեխաները,
- b. ճգնաժամից դուրս եկած և անցումային կացարանային պայմաններ ունեցող անձինք,
- c. հիվանդանոցներից դուրս գրված անձինք,
- d. մասնագիտացված խնամքի հաստատություններից դուրս գրված այնպիսի անձինք, որոնք ստացել են հատուկ հավաստագրված բուժում հոգեկան առողջության անկարողություններ ունեցող անձնաց համար,
- e. հոգեկան առողջության վերականգնողական կենտրոններից դուրս գրված մարդիկ,
- f. քաղաքի կամ վարչաշրջանի բնակներից արձակված մարդիկ:

## 6. Ի՞նչ տեսակի կացարան է առկա:

MHSA Բնակարանային ապահովման ծրագիրը վերաբերում է թե վարձակալվող բնակարաններին և թե ընդհանուր բնակության տրված բնակարաններին՝ Դուք կարող եք պայմանունակ լինել բնակարանի համար կամ բնակարանի ննջասենյակի համար:

## 7. Ի՞նչ աջակցող ածռայություններ կարող են առկա լինել:

MHSA բնակարանային ապահովման ծրագրի ֆինանսավորման համար բոլոր վարչաշրջանային դիմումները ներառում են աջակցող ծառայությունների պլան, որը նախատեսում է ծառայությունների հապատասխան ծրագրեր: Մա կարող է ներառել ճգնաժամերի կանխարգելման ծրագրեր, ընկերակցային աջակցություն կամ պետական նպաստների գծով խորհրդատվություն: Այդպիսի աջակցությունը թույլ է տալիս պայմանունակ անձանց ավելի անկախ ապրել համայնքում: Դուք կարող եք ընդունել ծառայությունները կամ հրաժարվել դրանցից և չեք կորցնի ձեր բնակարանը:

## 8. Որքա՞ն պետք է վարձակալողը վճարի աջակցվող բնակարանային ապահովման համար:

Աջակցվող բնակարանների համար վարձակալության վճարները տատանվում են՝ կախված բնակարանի և դրա վարձավճարի լրավճարման տեսակից:

Սովորաբար, վարձակալության վճարը չի գերազանցում վարձակալի եկամտի 30 տոկոսը: Կապնվեք MHPA բնակարանային ապահովման ծրագրի հետ՝ կամ ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության կամ վարքագծին առնչվող առողջության հարցերով վարչության հետ՝ ճշտելու համար արժեքը:

## 9. Ո՞վ է որոշում է անձի պայմանունակությունը աջակցվող բնակարանի համար:

Ձեր վարչաշրջանի վարքագծին առնչվող կամ առողջության առնչվող հարցերով վարչությունը կարող է ձեզ ասել, պայմանունակ եք դուք, թե ոչ:

## 10. Ինչպե՞ս կարող եմ դիմել աջակցվող բնակարանային ապահովման համար:

Կապնվեք ձեր տեղական կամ հոգեկան առողջության հարցերով վարչության հետ՝ ստանալու համար տեղեկություններ, թե ինչպես դիմել **MHPA** աջակցվող բնակարանային ապահովման համար ձեր տարածքում: Տեսեք հետևյալ հղումը՝ <http://www.dmh.ca.gov/docs/CMHDA.pdf>, տրամադրում է տեղեկություններ վարչաշրջանում հոգեկան առողջապահության հասանելիության մասին:

## 11. Իսկ եթե MHPA աջակցվող բնակարանները բոլորը զբաղված են:

MHPA նպատակ ունի «նահանգային և տեղական ֆինանսական միջոցներ տրամադրել համապատասխան կերպով հոգալուր համար այն բոլոր երեխաների և չափահասների կարիքները, որոնք կարող են նույնականացվել և այս միջոցի շրջանանկներում ծրագրում ընդգրկվել»: Այնուամենայնիվ, եթե աջակցվող բնակարանային ծրագրերի տեղերը զբաղված են, վարչաշրջանները կարող են բացել սպասելացանկեր, այնպես որ պայմանունակ անձինք կարող են օգնություն ստանալ, երբ այն հասանելի լինի: Կապնվեք ձեր տեղական առողջապահական կամ վարքագծին առնչվող առողջապահական հարցերով վարչությանը՝ ձեր տարածքում սպասելացանկերի հարցով:

## 12. Ինչ–որ բան կարո՞ղ եմ անել, եթե եվարչաշրջանը մերժում է աջակցվող բնակարանի համար իմ դիմումը:

Այո: Կարող եք խնդրել գրավոր բացատրություն առ այն, թե ինչպես է վարչաշրջանը որոշում, թե ով պետք է ստանա MHPA աջակցվող բնակարան: Դուք նաև կարող եք հարցնել, արդյոք վարչաշրջանը կատարել է MHPA հարցի լուծման գործընթացը՝ MHPA աջակցվող բնակարանի մրժման հարցերով զբաղվելու համար: Եթե ձեր վարչաշրջանը չունի Հարցերի լուծման գործընթաց, ապա դուք կարող եք, որ այն սահման այդպիսի գործընթաց: Դուք կարող եք հարցը բարձրացնել ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության հարցերով խորհրդում կամ հանձնաժողովում: Բացի այդ, դուք կարող եք կապվել փաստաբանի կամ իրավաբանի հետ՝ օժանդակություն ստանալու համար:

## 13. Որտե՞ղ կարող եմ լրացուցիչ տեղեկություններ ստանալ MHPA աջակցվող բնակարանային ապահովման մասին:

- Դուք կարող եք MHPA աջակցվող բնակարանային ապահովման մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալ ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության կամ վարքագծին առողջության հարցերով վարչությունում,
- Առողջապահության ֆինանսավորման հարցերով Կալիֆորնիայի վարչությունը հրատարակում է MHPA աջակցվող բնակարանային ապահովման Գործիքակազմ.  
<http://www.dhcs.ca.gov/services/MH/Documents/MHSAToolkit-Final.pdf>:
- Կալիֆորնիայի  
<http://www.calhfa.ca.gov/multifamily/mhsa/process/MHSABackground.pdf>
- MHPA կողմից ֆինանսավորվող որոշ նահանգային ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես՝  
<http://www.calhfa.ca.gov/multifamily/mhsa/projects/index.htm>

Ցանկանում ենք, որ կապնվեք մեզ հետ: Այս տեղեկատվական թերթիկը կարդալուց հետո խնդրում ենք լրացնել այս կարճ հարցաթերթիկը և տալ մեզ ձեր գնահատականը:

Անգլերեն տարբերակը՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form54/index.html>

Իսպաներեն տարբերակը՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form55/index.html>

*Disability Rights California*–ն ֆինանսավորվում է մի շարք աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տեսնելու համար այցելեք

[http://www.disabilityrightsca.org/  
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html) :

**Կալիֆորնիայի հոգեկան առողջությանը առնչվող ծրագրերի մարմինը (CaIMHSA) վարչաշրջանների կառավարությունների կազմակերպություն է, որը աշխատում է անհատների, ընտանիքների և համայնքների համար հոգեկան առողջությանը առնչվող խնդիրների հանգուցալուծումը դրսևացնելու ուղղությամբ: CaIMHSA կողմից իրականացվող՝ Կանխարգելման և Վաղ միջամտության ծրագրերը ֆինանսավորվում են վարչաշրջանների կողմից՝ ընտրողների կողմից հաստատված Հոգեկան առողջության ծառայությունների մասին օրենքով (թիվ 63 Առաջարկ): Թիվ 63 Առաջարկով նախատեսվում է այն ֆինանսավորումը և շրջանակը, որն անհրաժեշտ է հոգեկան առողջության ծառայությունները չսպասարկվող բնակչությանը և Կալիֆորնիայի բազմաբնույթ համայնքներին**



WELLNESS • RECOVERY • RESILIENCE

